ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 2456-Ա/2 **«24» նոյեմբերի 2026 թ.**

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ՝ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի փետրվարի 7-ի N 07-Ն հրամանի հավելվածի 2-ի 9-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողի ատեստավորման գործընթացի ժամանակացույցն՝ ըստ ուղղության՝ համաձայն հավելվածի:
2. «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ժամանակացույցով հաստատված առաջին ատեստավորումից առնվազն 15 օր առաջ հրամանը հրապարակել պաշտոնական կայքէջում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Աննա Բաբաջանյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2026 թ. նոյեմբերի 24-ի № 2456-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ՝
ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ

	Ատեստավորման ուղղություն	***Ատեստավորման օր***
	1. Հանրային սննդի տեխնոլոգիա	20.12.2026 թվական